Նորին Ամենապատուութիւն Տէր Տաղակալն Հայրապետութեան ամենայն Հայոց ի նկատի առնելով Ստեփան սարկաւագ Տէր Դանիէլեանցի անուղիղ և իւր կոչման պատիւ չբերող ընթացքը, արձակեց նորան Էջմիածնի Միաբանակցութիւնից, զրկելով միանգամայն ուրար կրելուց։

*
* *

Այս տարուայ սկզբից յանձնուեց տպագրութեան Սամուէլ քահանայ Անեցւոյ պատմութիւնը համեմատութեամբ մի քանի ձեռագրերի։ Սամուէլ Անեցւոյ պատմութեան համեմատողն և ծանօթութեամբ լուսաբանողն է ճեմարանի Աստուածաբանութեան ուսուցիչ Պ. Արշակ Տէր Միքէլեանը։

*
* *

Մայր Աթոռի մատենադարանում գտնուած Սոկրատի պատմութեան ամենահին ընդարձակ թարգմանութեան ձեռագիրը համեմատութեամբ բնագրի հետ շուտով տպագրութեան կ՝ յանձնուի աշխատութեամբ ճեմարանի մատենագրութեան և պատմութեան ուսուցիչ Պ. Փարսադան Տէր Մովսիսեանի, նոյնպէս և Եղիշէ վարդապետի ամբողջ մատենագրութիւնը, որոց մէջ կան նաև չտպուած հատուածներ։